Ղարխունի զօրասիւնը գրաւեց Թագա Ղարխուն գիւղը և ակտիւ գործողութիւններ վարեց Զօրան–Քեարա և Շոռլու–Մէխմանդար գիւղերի դէմ: Հակառակորդը մաքրեց երկաթուղագծից հիւսիս ընկած բոլոր գիւղերը, բացի Մաչափարուխ, Ղարաղչլաղ, Շոռլու–Մէխմանդար և Զօրան–Քեարա գիւղերից ու սկսեց փախչել դէպի հարաւ՝ երկաթուղագծի այն կողմը: Ինճ յանձնուած զօրախմբին հրամայեցի վերջնականապէս մաքրել խռովարարներին երկաթուղագծի հիւսիսային կողմը ընկած գիւղերից, իսկ յետոյ յարձակուել հարաւային գիւղերի վրա:

Յունիս 20–ին մեր զօրամասերը չարունակեցին հետապնդել խռովարարներին: Յունիս 21–ի լուսաբացին, կարճ ու վճռական կուից յետոյ, գրաւեց Սարաջալար գիւղը, որով և կատարուեց զօրախմբին յանձնարարուած խնդիրը: Սկսած յաջողութիւնն ընդլայնելով և եռանդուն կերպով հետապնդելով հակառակորդին՝ զօրասիւնը՝ կտրելով Թչնամու դիմադրութիւնը՝ գրաւեց Ռամազան Քէնդ գիւղը և ցրեց թաթար խուժանը: Այսպիսով, Զանգիբասարի շրջանը միանգամայն մաքրուեց հանրապետական կառավարութեանն անհնազանդ ազգաբնակութիւնից և վերջնականապէս միացաւ մեր սահմաններին, չնայած որ Զանգիբասարը երկու տարուայ ընթացքում կազմակերպուեց տաճիկ սպանների և ենթասպանների ղեկավարութեամբ ու աչքի ընկնող գինուորական ոյժ էր ներկայացնում՝ ամենահամեստ հաշուով 4000–ից ոչ պակաս տեղական մարտիկներ և 600—800 ասկեար, որ տեխնիկական տեսակէտից յաջող ամրացուած էր, ունէր 3 թնդանօթ, 8 գնդացիր և առատ փամփուշտ»:*)

Հայկական զօրքերը գրաւեցին 1 թնդանօթ, 2 գնդացիր, 40,000 փամփուշտ և առատ մթերք:

Զանգիբասարի կռիւների ընթացքում սպանուածների մէջ էր և Ց. Քալաղունիի սպայ որդին:

Զանգիբասարի հետ միաժամանակ, յունիս 18–ին գինուորական գործողութիւններ սկսուեցին և Կարսի նահանգում՝ ածխահանքերի գրաւման նպատակով: Հայկական զօրքերը զօր. Ցուլսէվեանի ընդհանուր ղեկավարութեան տակ և գնդ. Մխիթարեանի անմիջական հրամանատարութեամբ չարժուեցին երեք ուղղութեամբ. աջ զօրասիւնը գնդ. Մազմանեանի գլխաւորութեամբ՝ Դորա Քիլիսէից, միջինը՝ գնդ. Շահբուդաղեանի հրամանատարութեամբ՝ Մերդենեկի մօտից և աջը՝ փոխ–գնդ. Նեստերովսկիի գլխաւորութեամբ՝ Բեկկէի ղիրքերից: Յունիս 19–ին ամբողջ ճակատը դիմեց ընդհանուր յարձակման, և երկու օրւայ յամառ ու յաջող կռիւներից յետոյ, յունիս 21–ին, զօրամասերը միացան հանքերի արևմտեան մասում: Հակառակորդը, խալիլ բէյի հրամանատարութեան տակ, պարտուած փախաւ՝ թողնելով հայերին 2 արագաձիգ լեռնային թնդանօթ, 4 մաքսիմ գնդացիր, աւելի քան 100,000 մոսինի փամփուշտ, լեռնային թնդանօթի, 300 ռումբ, բազմաթիւ ձեռքի ռումբեր, փոներ, հարուստ պահեստներ՝ 1200 փութ հացահատիկ, 2000 մարդու պահածոյ միս, 50 փութ չաքար, 50փ. թխած հաց, 50 փութ պաքսիմատ, մեծ քանակութեամբ անասուններ և այլն և հարիւրաւոր սպանուածներ, որոնց մէջ նաև թիւրք սպաներ: Հայերի կո-

*) Վաղարշապատի զօրախմբի հրամանատար գնդ. Ա. Շահմազեանի հրամանից: «Ծառաջ», 1920թ. յունիս 27: